ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/124

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Հազարաշեն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչ՝ Ա. Մնացականյանի,
«Հազարաշեն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ռ. Իգիթյանի, ներկայացուցիչ՝ Կ. Սարյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոց ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության կողմից 06.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7074-2021 գրությամբ «Հազարաշեն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.05.2021թ. թիվ 02/16.4/3666-2021 գրության հիման վրա, 06.05.2021թ.-ին «Հազարաշեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 06.05.2021թ.-ին:

07.05.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/124 համարի ծածկագիրը:

13.05.2021թ.-ին, 20.05.2021թ.-ին, 26.05.2021թ.-ին և 07.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.06.2021թ.-ին:

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 04.05.2021թ. թիվ 02/16.4/3666-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Հազարաշեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 2020 թվականի մարտի 12-ին կնքվել է ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու

անվան N10 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Վերջինս ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N709-Ն որոշման հիման վրա 2020 թվականի հունիսի 12-ին կնքված N1 համաձայնագրով:

ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի N 397-Ն որոշմամբ նշված ծրագրի 2020 թվականին չիրացված գումարի չափով նախատեսվել է ֆինանսական միջոց:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջների՝ Պատվիրատուն 2021 թվականի ապրիլի 2-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի ապրիլի 23-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով (այսուհետ՝ ապահովում) ներկայացնելու մասին (2020 թվականին ներկայացված ապահովումների ժամկետները լրացել են 2020 թվականի նոյեմբերի 13-ին): Ընկերության կողմից ներկայացվել է միայն միակողմանի հաստատված համաձայնագիրը:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի ապրիլի 26-ից միակողմանի լուծել է: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2021 թվականի ապրիլի 29-ին տեղադրվել է www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հազարաշեն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 26.05.2021թ.-ին թիվ 02/16.4/4606-2021 գրությամբ հավելել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Հազարաշեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 2020 թվականի

մարտի 12-ին կնքվել է ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Վերջինս ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N709-Ն որոշման հիման վրա 2020 թվականի հունիսի 12-ին կնքված N 1 համաձայնագրով, որի հետ նաև բանկային երաշխիքի ձևով ներկայացվել են որակավորման և պայմանագրի ապահովումները (այսուհետ՝ ապահովում):

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար սահմանվել է 119 օրացուցային օր, որը 30 օրացուցային օրով երկարաձգվել է 2020 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված N 2 համաձայնագրով և աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 2020 թվականի նոյեմբերի 9-ը ներառյալ: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից աշխատանքները չեն կատարվել:

2020 թվականի դեկտեմբերին Ընկերության կողմից ներկայացված կանխավճարի բանկային երաշխիքի հիման վրա վճարվել է կանխավճար, իսկ Պայմանագրի մնացած գումարը ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե:

ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի N397-Ն որոշմամբ նշված ծրագրի չիրացված գումարի չափով նախատեսվել է ֆինանսական միջոց:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ <<Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում>>: Տվյալ գնման համար ֆինանսական պարտավորություններ ստանձնելու նպատակով Պատվիրատուն 2021 թվականի ապրիլի 2-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի ապրիլի 23-ը ներառյալ) համաձայնագիր կնքելու մասին, որը կարող էր կնքվել միայն նոր ապահովումներ ներկայացնելու դեպքում, քանի որ նախկին ապահովումների ժամկետները լրացել էին դեռևս 2020 թվականի նոյեմբերի 13-ին: Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է միայն միակողմանի հաստատված համաձայնագիրը, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջներին: Այդ հիմքով էլ Պատվիրատուն

Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի ապրիլի 26-ից միակողմանի լուծել է:

Տեղեկացնում եմ նաև, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ընդունումն ու ֆինանսավորումը կարող էր իրականացվել միայն ֆինանսական պարտավորություններ ստանձնելու վերաբերյալ կնքվող պայմանագրի (համաձայնագրի) հիման վրա, ինչը չի կատարվել:»:

Պատվիրատուն 31.05.2021թ.-ին ներկայացրած մեկ այլ՝ թիվ 02/16.4/4735-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 2021 թվականի մայիսի 26-ի N02/16.4/4606-2021 գրության կից Ձեզ եմ ուղարկում <<Հազարաշեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2020 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե (այսուհետ՝ Պատվիրատու) մուտքագրած N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) որակավորման և պայմանագրի ապահովումների (այսուհետ՝ ապահովումներ) բանկային երաշխիքների, 2021 թվականի մարտի 23-ին մուտքագրած Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտի և էլեկտրոնային գնումների համակարգ մուտքագրած հանձնման-ընդունման արձանագրության պատճենները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ

1. Պատվիրատուի կողմից 2021 թվականին հատկացված միջոցների շրջանակներում համաձայնագիր կնքելու մասին 2021 թվականի ապրիլի 2-ին ծանուցվել է Ընկերությանը՝ պահանջելով ներկայացնել նաև որակավորման և պայմանագրի ապահովումներ բանկային երաշխիքի ձևով, քանի որ Ընկերության կողմից նախկինում բանկային երաշխիքի ձևով ներկայացված ապահովումների ժամկետները լրացել էին 2021 թվականի ապրիլի 1-ին և երաշխիքները ներկայացվել էին պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետն ավարտվելուց հետո (պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը մինչև 2020 թվականի նոյեմբերի 9-ն է):

2. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը՝ ակտը, Պատվիրատուի կողմից չի ընդունվել:

3. Ընկերության կողմից էլեկտրոնային գնումների համակարգ մուտքագրված (ներկայացման ամսաթիվը համակարգում չի երևում) հանձնման-ընդունման

արձանագրությունը լրացվել է՝ չպահպանելով ՀՀ Ֆինանսների նախարարի 2017 թվականի հուլիսի 18-ի N356-Ն հրամանի պահանջները:»:

3. <u>«Հազարաշեն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.05.2021թ.-ին գրությամբ դիմել է «Հազարաշեն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7074-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 10.05.2021թ.-ին թիվ 33 գրությամբ ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Մ. Խորենացու անվան №10 ավագ դպրոց ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման 12.03.2020թ. կնքված № ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 պայմանագրով (Պայմանագիր) նախանշված նախագծի ամբողջական փաթեթը, ներառյալ Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 1 Ակտը, «Հազարաշեն» ՍՊ ընկերությունը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գլխավոր քարտուղարին ուղղված 22.03.2021թ. №13 կից գրությամբ հանձնել է Պատվիրատուին, իսկ Պայմանագրի կատարման արդյունքների հանձնման ընդունման արձանագրությունը սահմանված կարգով տեղադրվել է էլեկտրոնային գնումների armeps համակարգում:

Համաձայն Պայմանագրի՝ Աշխատանքի հանձնման և ընդունման կարգի 3.2 և 3.4 կետերի, եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված 10 օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է փրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Էլեկտրոնային հաղորդագրությամբ 02.04.2021թ. մեր հասցեագրմանը ներկայացված՝ Պայմանագրի №3 Համաձայնագրի առարկան 2021թ. վճարման ֆինանսական պարտավորությունների կատարման նոր ժամանակացույցի հաստատումն է, ինչը մեր կողմից կատարվել է սահմանված ժամկետում:

Վճարման նոր ժամկետների վերաբերյալ համաձայնագրի կնքման համար Պատվիրատուն պահանջել էր երկարաձգել գործող երաշխիքների ժամկետները կամ տրամադրել նոր երաշխիքներ, ինչը նախագծի ողջ ծավալով հանձնված լինելու պարագայում, կարծում ենք, անհրաժեշտ չէր:

Սակայն, այդուամենայնիվ, ընկերությունը դիմել էր «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Մերգելյան» մասնաճյուղին՝ նոր երաշխիքներ տրամադրելու հարցով, որի համար բանկը պահանջել էր վերը նշված համաձայնագրի հաստատված օրինակը, իսկ համաձայնագիրը երաշխիքների բացակայության պայմաններում Կոմիտեն չէր կնքում:

Ըստ այդմ Կոմիտեն, երաշխիքների տրամադրման անհրաժեշտությունը հիմնավորող 26.04.2021թ. թիվ 02/27.3/3411-2021 գրությամբ հաստատել էր իր պահանջը, որը նույն օրը ուղարկվել էր Հայբիզնեսբանկին: Բանկը պահանջվող երաշխիքները տրամադրել էր 29.04.2021թ., որոնք նույն օրն իսկ ուղարկվել են Պատվիրատուին:

Հաշվի առնելով, որ երաշխիքները Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում չտրամադրելու հիմքով Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը, որի հետևանքով ընկերությունը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, խնդրում ենք տալ տեղեկանք՝ բանկային երաշխիքների տրամադրման գործընթացի կարգի և տևողության վերաբերյալ:»:

Մասնակցի կողմից 18.05.2021թ.-ին ներկայացված թիվ 21-040 գրության համաձայն.

«Հանդիսանում եմ ՀՀ Փաստաբանների Պալատի անդամ, փաստաբան, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1249, միաժամանակ հանդիսանում եմ <Հազարաշեն> ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

ՀՀ Ֆինանսների նախարարությունը 06.05.2021թվականի թիվ 26/26-1/7074-2021 գրությամբ <Հազարաշեն> ՍՊԸ-ին (այսուհետ <Ընկերություն>) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/124 ընթացակարգը:

Ընկերությունն արդեն իսկ իր գրավոր կարծիքը ներկայացրել է Բողոքներ քննող անձին, սակայն հաշվի առնելով ընթացակարգի լուծման համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, անհրաժեշտության առաջացավ ներկայացնել գրավոր լրացում

<Առարկություններ> վերտառմամբ սույն փաստաթուղթը հետևյալ պատճառաբանություններով:

12.03.2020 թվականին ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեի (այսուհետ՝ <Կոմիտե>), որպես Պատվիրատուի և Ընկերության որպես Կատարողի միջև կնքվել է պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 պայմանագիրը (այսուհետ <Պայմանագիր>), որով Ընկերությունը ստանձնել է ՀՀ Արմավիրի մարզի <Վաղարշապատի Մ. Խորենացու անվան N° 10 ավագ դպրոց> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը:

Ընկերությունն իր պարտավորությունները կատարել է պատշաճ և պայմանագրի արդյունքը 2021թ. մարտի 22-ին Կոմիտեի գլխավոր քարտուղարին ուղղված թիվ 13 ուղեկցական գրությամբ հանձնել Պատվիրատուին, իսկ Պայմանագրի 3.1 կետի պահանջներով առաջնորդվելով 2021թ. մարտի 24-ին էլեկտրոնային գնումների armeps համակարգում տեղադրվել է հանձնման-ընդունման արձանագրությունը:

Պայմանագրի 3.2 և 3.3 կետերով սահմանված 10 օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն աշխատանքի արդյունքը ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ որևէ գործողություն չի ձեռնարկել, փոխարենը 2021թ. ապրիլի 2-ին էլեկտրոնային հաղորդագրությամբ Ընկերության հաստատմանն է ներկայացրել՝ Պայմանագրի N° 3 Համաձայնագիրը՝ 2021թ. վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) նոր ժամանակացույցը հաստատելու մասին:

Հիշյալ փաստից Ընկերության համար պարզ է եղել այն, որ Պատվիրատու Կոմիտեն ընդունել է աշխատանքի արդյունքը և պարտավորվել վճարել դրա դիմաց երկկողմանի սահմանվող նոր ժամանակացույցի համաձայն:

Ընկերությունը ստորագրել է Համաձայնագիրը և 2021թ. ապրիլի 23-ին թիվ 21 ուղեկցական դրությամբ էլեկտրոնային եղանակով Կոմիտեի հաստատմանն է ներկայացրել Համաձայնագիրը երկու օրինակից:

2021թ. ապրիլի 26-ին կոմիտեն իր թիվ 02/27.3/3411-2021 դրությամբ Ընկերությանն առաջարկել է երկարաձգել պայմանագրի շրջանակներում 2020 թվակնաին հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում ընկերության կողմից նախկինում ներկայացրած բանկային երաշխիքների ժամկետները կամ փոխարինել նոր երաշխիքներով, իսկ 2021 թվականի շրջանակներում հատկացվող ֆինանասկան միջոցների համար ներկայացնել նոր երաշխիքներ:

Հատկանշական է այն, որ աշխատանքի արդյունքը հանձնված լինելու պայմաններում Պայմանագրով սահմանված պարտավորությունների (աշխատանքների կատարման) կատարման ապահովման միջոց նոր երաշխիք ներկայացնելու մասին խոսք լինել չի կարող:

Չնայած այն հանգամանքի, որ Ընկերությունը համաձայն չի եղել առաջարկությունն ընդունելուն, քանի որ աշխատանքի արդյունքն արդեն իսկ հանձնված է եղել Պատվիրատուին, այնուամենայնիվ 2021թ. ապրիլի 28-ին Կոմիտեին է ներկայացրել պահանջված երաշխիքները:

Սակայն Կոմիտեի 2021թ. ապրիլի 29-ի թիվ 02/16.4/3529-2021 գրությամբ Ընկերությանը տեղեկացվել է, որ համաձայն ՀՀ Կառավարության 25.03.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի (այսուհետ <Կարգ>) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021թ. ապրիլի 26-ից միակողմանի լուծում է:

Պայմանագիրը միակողմանի լուծելուն ուղղված Կոմիտեի գործողություններն ակնհայտ անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի՝ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է. որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերը նշված իրավական նորմի պահանջը կարգավորում է պայմանագրի ժամկետներից դուրս կատարվելիք աշխատանքների կատարման վերաբերյալ կնքվելիք համաձայնագրի պայմաններում երաշխիք ներկայացնելուն, ինչը տրամաբանական է և օրինական, մինչդեռ տվյալ դեպքում աշխատանքների կատարման վերաբերյալ խոսք չկա:

Ինչպես վերը նշվեց պայմանագրի արդյունքը Պատվիրատուին է հանձնվել 2021թ. մարտի 22-ին:

Համաձայն Պայմանագրի 3.4 կետի պահանջների՝ եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված 10 օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա այն համարվում է ընդունված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին սոիալ մասնակցի հետագամասնակցության դադարեցմանը:

Վերը նշված փաստերի և իրսվական նորմերի համադրումից հետևում է, որ Պայմանագիրը միակողմանի լուծելու Կոմիտեի գործողություններն իրավաչափ չեն, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգը ենթակա է մերժման:»:

4. <u>ՍՑ-LO-2021/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Հազարաշեն» ՍՊԸ-ի միջև 12.03.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4» ծածկագրով պետական գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման

պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբ է սահմանվել Պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 119-րդ օրացուցային օրը ներառյալ՝ համաձայն Հավելված N 1.1-ի:

iv. Պատվիրատուի և «Հազարաշեն» ՍՊԸ-ի միջև 12.06.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր թիվ 1), որով սահմանվել է վճարման ժամանակացույցը:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 29.04.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 29.04.2021թ.-ի թիվ 02/16.4/3529-2021 ծանուցման համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Հազարաշեն» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի մարտի 12-ին կնքվել է ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4» գնման պայմանագիրը՝ 15 700 000 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Հիմք ընդունելով ներկայացված կանխավճարի բանկային երաշխիքը՝ 2020 թվականի տարեվերջին Ընկերությանը վճարվել է 3 925 000 (երեք միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամի չափով կանխավճար, իսկ մնացած գումարը չի իրացվել և վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի թիվ 397-Ն որոշմամբ նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է 11 775 000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումար:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջների համաձայն՝ Պատվիրատուն 2021 թվականի ապրիլի 2-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ)

աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի ապրիլի 23-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով (այսուհետ՝ ապահովում) ներկայացնելու մասին (2020 թվականին ներկայացված ապահովումների ժամկետները լրացել են 2020 թվականի նոյեմբերի 13-ին): Ընկերության կողմից ներկայացվել է միայն միակողմանի հաստատված համաձայնագիր: Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի ապրիփ 26-ից միակողմանի լուծել է:

vi. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից «Հազարաշեն» ՍՊԸ-ին 21.12.2020թ.-ին թիվ 231-51 և 232-51 որակավորման և պայմանագրի ապահովման վերաբերյալ տրված բանկային երաշխիքների ժամկետը սահմանվել է 01.04.2021թ.-ը:

vii. Մասնակիցը 22.03.2021թ.-ին թիվ 13 գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքային նախագիծը՝ 6 օրինակ, նախահաշիվը՝ 3 օրինակ, հայերեն և ռուսերեն լեզուներով: Նշված գրությունը Պատվիրատուի քարտուղարությանն է հանձնվել 23.03.2021թ.-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7074-2021 գրությամբ «Հազարաշեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանա-տվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 7.13 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա

Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը գալիս է նաև այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի կամ կնքված պայմանագրի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը կամ պայմանագրի միակողմանիորեն լուծմանը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Հազարաշեն» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի մարտի 12-ին կնքվել է ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4» գնման պայմանագիրը՝ 15 700 000 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Հիմք ընդունելով ներկայացված կանխավճարի բանկային

երաշխիքը՝ 2020 թվականի տարեվերջին Ընկերությանը վճարվել է 3 925 000 (երեք միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամի չափով կանխավճար, իսկ մնացած գումարը չի իրացվել և վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի թիվ 397-Ն որոշմամբ նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է 11 775 000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումար: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջների համաձայն՝ Պատվիրատուն 2021 թվականի ապրիլի 2-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի ապրիլի 23-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով (այսուհետ՝ ապահովում) ներկայացնելու մասին (2020 թվականին ներկայացված ապահովումների ժամկետները լրացել են 2020 թվականի նոյեմբերի 13-ին): Ընկերության կողմից ներկայացվել է միայն միակողմանի հաստատված համաձայնագիր: Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի ապրիփ 26-ից միակողմանի լուծել է՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 29.04.2021թ.-ին հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծման մասին 29.04.2021թ.-ի թիվ 02/16.4/3529-2021 ծանուցումը:

«Հազարաշեն» ՍՊԸ-ն 22.12.2020թ.-ին գրությամբ Պատվիրատուին է հանձնել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից Մասնակցին 21.12.2020թ.-ին թիվ 231-51 և 232-51 որակավորման և պայմանագրի ապահովման վերաբերյալ տրված բանկային երաշխիքները, որոնց ժամկետը սահմանվել է 01.04.2021թ.-ը:

Մասնակիցը 22.03.2021թ.-ին թիվ 13 գրությամբ Պատվիրատուին է ներկայացրել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքային նախագիծը՝ 6 օրինակ, նախահաշիվը՝ 3 օրինակ, հայերեն և ռուսերեն լեզուներով: Նշված գրությունը Պատվիրատուի քարտուղարությանն է հանձնվել 23.03.2021թ.-ին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4» ծածկագրով պետական գնման պայմանագրով Մասնակցի վրա դրված

պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն գործում առկա փաստերով հիմնավորվում է, որ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4» պայմանագրի շրջանակներում 22.12.2020թ.-ին Մասնակցի կողմից ներկայացվել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 21.12.2020թ.-ին տրված թիվ 231-51 և 232-51 որակավորման և պայմանագրի ապահովումները, իսկ արդեն 22.03.2021թ.-ին թիվ 13 գրությամբ ներկայացվել է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքային նախագիծը՝ 6 օրինակ, նախահաշիվը՝ 3 օրինակ, հայերեն և ռուսերեն լեզուներով:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ աշխատանքների կատարման վերաբերյալ ներկայացված գրությունը Պատվիրատուի քարտուղարությանն է հանձնվել 23.03.2021թ.-ին՝ թիվ 231-51 և 232-51 որակավորման և պայմանագրի ապահովումների գործողության ժամկետում: Ըստ այդմ՝ եթե Պատվիրատուի կողմից թիվ 13 գրությունը ստանալուն պես, մինչև երաշխիքներով սահմանված ժամկետի ավարտը, ձեռնարկվեին համապատասխան միջոցներ և Մասնակցին ուղարկվեր թիվ 3 համաձայնագիրը, ապա բանկային երաշխիքների կրկին ներկայացման անհրաժեշտություն չէր առաջանա, ուստի Մասնակցի վրա չէր դրվի անհամաչափ պարտավորություն, որի չկատարման արդյունքում կատարված պայմանագիրը կլուծվեր:

Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 7.13 կետով սահմանված դրույթների խախտման մասին, որն էլ, իր հերթին կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4» ծածկագրով պետական գնման պայմանագրի մասով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Պատվիրատու և Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մասնակցի կողմից Պայմանագրից բխող պարտավորության չկատարման հանգամանքը պայմանավորված է Պատվիրատուի կողմից դրսևորված անգործությամբ. Պատվիրատուն 23.03.2021թ.-ին ստանալով աշխատանքների կատարման վերաբերյալ թիվ 13 գրությունը, այդ պահին ունենալով մինչև 01.04.2021թ.-ը

գործող բանկային երաշխիքներ, քայլեր չի ձեռնարկել համաձայնագիրն այդ ժամանակահատվածում կնքելու համար, դրանով իսկ նպաստելով Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7074-2021 գրությամբ «Հազարաշեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/124 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**